

## ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴԸ



### ԷՂՎԱՐԴ ԳԱՆԻԿՅԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: 2016 թվականի հուլիսի 15-ին՝ 64-րդ տարում կյանքից հեռացավ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հնաբնակ և առանցքային դասախոսներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էղվարդ Գալուստի Դանիեյանը:

Է. Գ. Դանիեյանը ծնվել է 1952 թ. ապրիլի 1-ին ՀԽՍՀ Նաիրիի շրջանի Եղվարդ քաղաքում՝ Պարսկաստանից հայրենադարձված, արմատներով դարադառնի ավանդապաշտ հայկական ընտանիքում: 1969 թ. ավարտել է Երևանի Պ. Յավրոպի անվան թիվ 131 միջնակարգ դպրոցը: 1972 թ. ընդունվել և 1977 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

1984-1988 թթ. ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում՝ «Հայոց պատմություն» մասնագիտությամբ: 1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Անդրկովկասում ապաստանած արևմտահայ գաղթականությունը 1914-1922 թթ.» թեմայով:

Աշխատանքային գործունեությունը է. Դանիեյանը սկսել է ԵՊՀ ՌԻԳՀԱ խորհրդում՝ որպես ավագ տեսուչ: Այնուհետև աշխատանքի է անցել մայր բուհի Հայոց պատմության ամբիոնում՝ զբաղեցնելով ավագ լաբորանտի, ասիստենտի, ավագ դասախոսի, իսկ 2000 թ. սեպտեմբերից՝ դոցենտի պաշտոններ:

1981 թվականից մինչև մահը Է. Դանիեյանը ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում դասավանդել է «Հայոց պատմություն» ընդհանուր դասընթացը, իսկ պատմության ֆակուլտետում՝ «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» ընդհանուր մասնագիտական և «Հայոց պետականության պատմություն» մագիստրոսական դասընթացները: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մագիստրոսական և ավարտական բազմաթիվ աշխատանքներ:

1997-1998 թթ. դասախոսել է Համազգայինի Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկում:

Որպես պատմաբան Է. Դանիեյանն իր կոլեգաների միջավայրում միշտ առանձնացել է նրանով, որ ուներ խոր գիտելիքներ հայոց պատմության բոլոր պատմաշրջանների վերաբերյալ, քաջատեղյակ էր ինչպես հայոց հին ու միջնադարյան պատմության աղբյուրներին, այլև նոր շրջանի արխիվային և այլ սկզբնաղբյուրներին: Շնորհիվ դրա, նա այն պատմաբաններից էր, ով ուներ ընդգծված ազգային, համակարգված և կուռ հայեցակարգ հայոց պատմության բոլոր պատմաշրջանների վերաբերյալ: Նրա դասա-

խոսությունները միշտ աչքի են ընկել գիտական բարձր մակարդակով, կուռ տրամաբանությամբ և հարցադրումների ինքնատիպությամբ:

Լայն էր Է. Դանիելյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ընդգրկել է Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին Հանրապետության և հայ գաղթականության պատմության մի շարք վիճահարույց հիմնախնդիրներ: 2005 թ. լույս է տեսել նրա «The Armenian Genocide 1894-1922» խորագրով մենագրությունը, որտեղ արվել են ինքնատիպ դիտարկումներ և լուրջ հարցադրումներ Հայոց ցեղասպանության պատճառների, իրագործման մեխանիզմների և թուրքական պետականության պատասխանատվության վերաբերյալ: Մահվանից հետո 2017 թ. լույս է տեսել նրա «Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը)» 15 մամուլ ծավալով ուսումնասիրությունը: Նորահայտ արխիվային և այլ սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված մենագրությունն ուշագրավ դիտարկումներ է պարունակում Անդրկովկասում ապաստանած հայ փախստականների, առաջին հերթին՝ արևմտահայ գաղթականության հետ կապված մի շարք խնդիրների վերաբերյալ: Էդվարդ Դանիելյանը հեղինակ է նաև շուրջ չորս տասնյակ գիտական հոդվածների, որոնցում առկա են լուրջ հարցադրումներ ինչպես վերը նշված հիմնահարցերի, այլև հայոց պատմության ցայտօր վիճահարույց մի շարք խնդիրների վերաբերյալ:

Է. Դանիելյանը նաև հեղինակել է «Հայոց պատմության հիմնահարցեր» բուհական ձեռնարկի (Երևան, 2000 թ.) և «Հայոց պատմություն» (Երևան, 2012 թ.) բուհական դասագրքի առանձին բաժիններ: Համահեղինակ է բուհական գործող ծրագրի:

Է. Դանիելյանն ընդգծված ազգային դիմագիծ և քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող մտավորական էր: Առօրյա կյանքում լինելով զուսպ և բնավորությամբ համեստ անձնավորություն՝ նա եռանդուն ու անզիջում էր դառնում, երբ հարցը վերաբերում էր ազգային խնդիրներին և Հայոց պատմության սկզբունքային հարցերին: Է. Դանիելյանը գործուն մասնակցություն է ունեցել 1988 թ. ծավալված Արցախյան համաժողովրդական շարժմանը՝ լինելով նրա ակունքներում, հանդիսանալով գաղտնի կոմիտեի անդամ:

Երկարամյա և արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար Էդվարդ Դանիելյանը 2014 թ. պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրով:

Հայտնի պատմաբանի, սիրված դասախոսի, ազնիվ քաղաքացու և ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, հարազատների, գործընկերների ու ուսանողների սրտերում:

**ԵՊՀ Հայոց պատմության ամբիոն  
Պատմության ֆակուլտետի դեկանատ**